ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

ԵԴ2/8569/02/24 ք. Երևան
17 Հոկտեմբերի 2024թ

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ն.Ավետիսյանս ծանոթանալով «Էսզեթ Ֆարմ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑ

«Էսզեթ Ֆարմ» ՍՊ ընկերության ներկայացուցչի կողմից հայցադիմում է ներկայացվել դատարան ընդդեմ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան ՀՄ-ի՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի և «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի միջև 13.03.2024թ.-ին կնքված թիվ ԷԱՃԱՊԶԲ-2024/16-12-ԵՊԲՀ-1 պայմանագիրը 13.09.2024թ.-ին Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի կողմից միակողմանի լուծելն անվավեր ճանաչելու և «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի ռեկտորի 20.09.2024թ.-ի թիվ 09/1347 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատարանը հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը լուծում է այն ներկայացվելուց հետո՝ եռօրյա ժամկետում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը կատարվում է պատասխանողի կողմից որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

Նույն մասի երկրորդ պարբերության համաձայն՝ նախատեսված ժամկետում պատասխանողի կողմից ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշման պահանջները չկատարվելու դեպքում գործը քննվում է դրանում առկա ապացույցների հիման վրա, իսկ հայցվորի վկայակոչած այն փաստերը, որոնք ենթակա են հաստատման պատասխանողի տիրապետման տակ գտնվող ապացույցներով, համարվում են հաստատված:

Ուսումնասիրելով ներկայացված հայցադիմումը, կից փաստաթղթերը, գտնում եմ, որ այն պետք է ընդունել վարույթ, քանի որ առկա չեն հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:

Միաժամանակ, Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան ՀՄ-ից պետք է պահանջել 13.03.2024թ.-ին կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ-2024/16-12-ԵՊԲՀ-1 պայմանագրի և 20.09.2024թ.-ի թիվ 09/1347 որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 199-րդ հոդվածնով, Դատարանը

ՈՐՈՇԵՑ

1.«Էսզեթ Ֆարմ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայցադիմումն ընդդեմ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան ՀՄ-ի՝ Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի և «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի միջև 13.03.2024թ.-ին կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ-2024/16-12-ԵՊԲՀ-1 պայմանագիրը 13.09.2024թ.-ին Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի կողմից միակողմանի լուծելն անվավեր ճանաչելու և «ԷՍԶԵԹ ՖԱՐՄ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան Հիմնադրամի ռեկտորի 20.09.2024թ.-ի թիվ 09/1347 որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, ընդունել վարույթ:

2.Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան ՀՄ-ից պահանջել դատարան ներկայացնել 13.03.2024թ.-ին կնքված թիվ ԷԱՃԱՊՁԲ-2024/16-12-ԵՊԲՀ-1 պայմանագրի և 20.09.2024թ.-ի թիվ 09/1347 որոշման հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

3.Ապացույցներ պահանջելու վերաբերյալ որոշումը պատասխանող Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան ՀՄ-ի կողմից պետք է կատարվի սույն որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում:

4. Եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թվականի նոյեմբերի 26-ին:

5. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և բողոքարկման ենթակա չէ:

Դատավոր՝ Նաիրա Ավետիսյան Digitally signed by AVETISYAN NAIRA 7501660379
Date: 2024.10.17 16:07:21 AMT

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am